




ՀԱՅԴԱԿԱՆ Ք

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԸ

ԳՐԱԲԱՐԻ ԶԵՌՔՈՎ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԵՒ ԿԱՆՈՆԱԻՌՈՐԵԼՈՒ
ԵՒ ԳՐԱԲԱՐ ԼԵԶՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՄԷՋ ԿԵՆԴՐԱՑՆԵԼՈՒ ԽՆԴԻՐՆ



Սկզբում ռուսահայ մամուլն ժողովրդական լինելու ընդհանուր ձևուման, զոր պէտք ենք համարել իբրեւ մի այլ պատճառ նոցա աշխարհաբար լեզուին՝ չարունակ մի և նոյն կայուն վիճակի մէջ մնալուն, այսպէս կարելի է ասել, թէ արդարեւ ինչպէս բժիշկը՝ հիւանդին բերնով պէտք է որ հասկնայ նորա ցաւերն և դարմանէ, դաստիարակը՝ սանիկին, և վարդապետն՝ աշակերտին. այսպէս և մամուլը պէտք է որ առաջին անգամ համակերպի այն հասարակութեան վիճակին, զոր կ'ուզէ դաստիարակել, լուսաւորել և իւր նպատակին հասնել։ Այս՝ փորձառութեամբ ապացուցեալ մի ճշմարտութիւն է, և ով որ չխոնարհի դէպ 'ի անկեալը՝ չկարէ վերականգնել. այսպէս ըրաւ նաեւ անկեալ մարդկութեան հասարակաց բժիշկն և ազատարարը. միով բանիւ, այս է մտաւորական և բարոյական դաստիարակը։

րակութեան բնական և լաւագոյն ոճը: Բայց նոյնպէս ճշմարիտ է և այս, թէ ինչպէս բժշկը՝ պէտք չէ որ միշտ հիւանդին կամաց ենթարկուած մնայ, դաստիարակը՝ սանիկին, և վարդապետն՝ աշակերտին, այսպէս ուրեմն և ազգային մամուլն, որ գծողովորդն և ժողովրդական լեզուն զարգացնելու և յառաջացնելու նուիրական պարտքն և պաշտօնն իւր վրայ ստանձնել է, հասարակութեան պահանջին մի անգամ համակերպուելէն վերջ պէտք է որ ջանայ այնուհետեւ մէկ կողմէն զայն վեր բարձրացնելով իրեն մերձեցնէ և համակերպէ, իսկ միւս կողմէն այլ ինքը շարունակ նոր քայլափոխներ առնու, ապա թէ ո՛չ անոր խոնարհած ժամանակ՝ ինքն ևս միշտ ՚ի խոնարհ պիտի մնայ, զայն յառաջադիմել ուղած ժամանակ՝ զինքն ևս նորայեռամբացութեանը ենթարկած պիտի լինի: Իսկ որովհետեւ, ինչպէս ՚ի վեր անդր տեսնուեցաւ, ուստահայ մամուլը՝ գէթ հայերէն լեզուի մշակութեան մասին՝ ցանկացած զարգացումը ցուցած չէ, ուրեմն պէտք է ըսել, թէ այդպիսի մի դանդաղութեան պատճառը կամ մամուլին բռնած ուղղութիւնն է և կամ հրահանգելի հասարակութիւնը, որ չէ ուղած ըստ արժանւոյն նորա գործունէութեան համակերպել:

Ներուի ինձ երկու խօսք ևս ըսել արեւմտեան Հայոց աշխարհաբարի և գրականութեան զարգացման մասին, որոնց կեդրոնատեղիքն են Զմիւռնիա, Կ. Պոլիս, Վենետիկ՝ ուր կը ննչէ Միսիթար Սեբաստացին և Վիեննա: Արդ, սոցա գրական գործունէութիւնն և գործերն՝ ամենուն ծանօթ լինելով, կը թողում իմ ընթերցողացս ինչպէս կ'ուզեն գնահատեն, որովհետեւ իմ նիւթէս դուրս է. այսքան միայն կարելի է ըսել, թէ առաջին երկու կեդրոնատեղեաց մէջ, որոնք ուղղակի հայ հասարակութիւններ կը ներկայացնեն՝ և գործելու և խօսելու և գրելու ընդարձակ ասպարէզ ունին, թէպէտ և կ'ընծայեն մեզ այսօր խումբ մի գրողներու և ուսումնասէրներու, սակայն ՚ի բաց առեալ նոցանէ մի քանին, որոնք, ըստ բերման դիպաց՝ վերջին երկու վառարաններէն ելած և հոն դիմած են, գոզցես իմն նոցա գրականական խաւարը լուսաւորելու համար, միւսներն առ հասարակ որչափ որ իրենց ծաղկաւէտ լեզուով, հանճարեղ ասութեամբք և կենդանի երևակերպութեամբ կը թուին երբեմն գերազանցել արեւելեան Հայոց գրիչները, սակայն դեռ ընդեւացած չեն նոցա գրական ոճին, լուրջ և անխոնջ քննադատութեան, հաստատուն գաղափարաց և կարգաբանութեան, մանաւանդ թէ ժԹՊ. պէս ուսումնական դարուն անգամ՝ դեռ ակործելի է նոցա հինաւորց Աթենացոց նորաբանութիւններն ասել և լսել, խօսել և գրել, Լսածիս օրինակ թող լինին Գրասէրի, Շահնազարեանի և նմանեաց գրութիւններն, որք ուրախացուցած ժամանակ՝ նոյնպէս կը տրտա-

մեցնեն, և ապագայ յուսոյ փայլուն նշույլից հետ ի միասին՝ սեն ևս կը ներկայացնեն հայրենասէր սրտերու:

Իսկ խօսելով ուղղակի լեզուի մասին, պէտք է ըսել, թէ արեւմտեան Հայոց այսօրուան աշխարհաբարը՝ համեմատութեամբ 20-30 տարի առաջ խօսուածին և գրուածին՝ զգալի կերպով յառաջադիմած է և մշակուած: Կրկին են, ըստ իս, այդպիսի հսկայաքայլ յառաջխաղացութեան պատճառքն. Ա. Դիտելով որ այս հայ հասարակութեան նախկին աշխարհաբարը, կամ լաւ ևս, ռամկախօսութիւնը գրեթէ ըստ մեծի մասին թրքերէն տարերօք բաղկացած էր. բայց երբ շնորհիւ այն մեծ բարերարին Մխիթարայ՝ ծագեցաւ վերնոսին գիտութեան լոյսը և վառեցաւ հայրենեաց սէրը, նոցա առաջին ջանքն եղաւ մէկ կողմէն թօթափել և արտաքսել բոլոր այն օտարասեռ տարերքն, համարելով իբրեւ եղծիլ ազգային լեզուին և գոյութեան, իսկ միւս կողմէն այլ ջանալ գործածել զուտ հայկական բառեր և բացատրութիւններ: Բ. Դիտելու է, որ այս հասարակութիւնն չունելով դէպ ՚ի գրաբարն Ռուսա-Հայոց այն հնացեալ ատելութիւնն, անդատին մասնաւոր բերումն ևս ցուցել է առ այն Այն գունդագունդ աշակերտներն և վարդապետներն, որք Մուրատեան և Ռափայէլեան և ուրիշ ազգային վարժարաններէն ելած՝ կը դիմէին իրենց հայրենիքն՝ Իւրեւմիտ լուսաւորը, և այլ և այլ գիտութեանց հետ՝ կը տանէին նաև հայերէն լեզուն և կը մշակէին. այսպիսիք էին Պէշիկթաշեանք, Թովմաս Թերզեանք, Հիսարեանք, Սաղաթեանք, Փորթուղալեանք, Հեքիմեանք, Արփիարեանք և ուրիշ յիշեալ բանասիրաց նման բազումք, որոնց համար կարելի է ասել, թէ Կ.Պօլսոյ նախկին հայագէտներն և մասնազգիւրն եղան: Արդ, նախնեաց գրաբարն և գրաբարի այս աշխոյժ գործիչներն՝ եղան ստուգիւ և պիտի լինին իբրեւ բեղմնաւոր աղբիւրներ Արեւմտեայց աշխարհիկ լեզուն հարստացնելու, ազնուացնելու և իւր վերջին կատարելութեան հասցնելու համար: Իսկ նոքա՛որք դեռ կը տարակուսին արեւմտեան աշխարհաբարին ըրած կարգէ դուրս զարգացման վրայ, թող հաճին բաղդատել «Բազմաշէյխի», «Էշրուպայի», Մասիսի և Արև. Մամուշի առաջին տարիներուն մէջ հրատարակուած թիւերն՝ Արևելքի, Համդիսի, Բազմաշէյխի և Մամուշի վերջին տարուան թիւերուն հետ, և ակներև պիտի տեսնեն իրին ստոյգ եղելութիւնն:

Արդ, ինչպէս ցանկալի է մեզ, որ Տաճկա-Հայք՝ Ռուսա-Հայոց ուսումնասիրութեան ոճին հետեւին, այսպէս ևս կը փափաքինք, որ փոխադարձաբար այս վերջիններս այլ աշխարհաբարի մշակման և գրաբարն օգտակար ընելու համար՝ իրենց ազգակցաց հետ զուգընթանային, առանց պատրուակ առնելու զփողովուրդն և իրենց ժողովրդականութիւնը. մտածելով, որ իրենց հրատարակութիւնքը՝ միայն զիրենք չըլլապատող հասարակութեան համար չէ, որոնք ինչպէս

օտար բառեր և բացատրութիւնս, այսպէս և հայերէնը կարող են հասկանալ. այլ բոլոր Հայաստանի և հայ ազգաբնակութեանց հաճութիւն, որոց լեզուն աւելի ռամկօրէնով խառն գրաբարի մօտ է, քան թէ Տփղիսի կարծեցեալ աշխարհաբարին: Երկրորդ, նկատելով որ Անդրակովկասու այլևայլ գաւառաց բնակչաց ականջներն՝ եկեղեցական գրոց հանապազօրեայ ընթերցմամբ և ունկնդրութեամբ՝ գրաբարին աւելի ընդելացած են, քան թէ Տփղիսի աշխարհաբարին: Ձայս ևս թող չմոռանան Տփղիսի թերթերուն ծառայող այն նորեկ գրիչներն, թէ ինչպէս իրենք՝ գրաբար ոճերու հանդիպած ժամանակ, որոնք հայութիւն կը շնչեն, կը զայրանան, այսպէս ևս յարեմտեայց շատերն՝ իրենց մարդկերանցից, աղջկերանցից՝ և ուրիշ այլանդակ կողմութիւններէն և յօտարաբանութեանց ձեռքած բազմազգայնեան ճիւղներէն կը խորշին, և գրուածքն իսկ մէկդի կը նետեն, ընտրելով աւելի ընդհատել ընթերցումը, քան թէ լսել մարդակերաց և աղջկակեր ձայնից խղուրդաւորներ:

Ուրեմն, որպէս զի այս երկու կողմանց հայ հասարակութիւններն կարենան իրարու գրուածքն ընթեռնուլ. որպէս զի այս կրկին աշխարհաբարներս կարենան իրարու մօտենալ և միանալ. միով բանիւ, որպէս զի կանոնաւոր կերպով կատարելութեան հասնին, հարկ է, որ մէկ կողմէն վերցուին զանոնք իրարմէ անջատող արգելքն. իսկ միւս կողմանէ՝ ընտրուի զանոնք իրարու հետ միացնող միջնորդ մի:

Իսկ եթէ հարցուի, թէ որոնք են արդեօք այդ արգելքն և որն ինչն այդ հասարակաց միջնորդը, կը պատասխանեմ, թէ յիրաւի, մի մի իրական արգելքներ են արեւելեան աշխարհաբարի կանոնաւոր զարգացման՝ Ա. այն սց և ից վերջացող անկանոն կրկնաւեռնակումներն. այն ուն և հռն վերջաւորութիւններն, որք այսօր սեփականութեամբ են ոչ միայն բնութեամբ ուն վերջացող բայերուն, օրինակ իմն. առնոն, ընկեռնոն, ընքեռնոն, զեռնոն և այլն, այլ ուրիշ որ և է բայերու առհասարակ, որոնց սահմանական եղանակի ներկայն գրաբարի մէջ աւ, եւ, իւ կը վերջանայ. Բ. Այն տրականակերպ հայացականներն՝ որոնք մտաց գաղափարին և նորա բացատրութեան մէջ կռիւ կը յարուցանեն, օրինակ իմն, ինն սիրեց (զիս սիրեց), ինն թշնամանեց (զիս թշնամանեց) և այլն: Գ. Այն աներևոյթներն որոնք անցեալ դերբայի կերպարանք առած են. օրինակի աղազաւ, բանալը՝ յացելի փոխուելով. Դ. Այն քիւնով և քոյնով վերջաւորող գործիականներն, ինչպէս գրականութիւնով. Ե. Այն ներգործակերպ բայց կրաւորական բայերն, որք գրուած կամ արտասանուած բայից և նոցա նշանակութեանցը մէջ չփոխութիւն և անհամաձայնութիւն կը կազմեն. օրինակ իմն, աղաղաւանդ (արդարանալ կամ արդարացուիլ). տրեց (տրուեցաւ). Զ. Այն անցեալ դերբայները՝ որոնք Սահմ.

ներկայի կերպով գործածուած են. օրինակի աղադաւ, «Մուրճը
ասպարէզ է բացում» (բանում կամ բացել է) «որոնք ապաստում
լինէին» (սպասած լինէին): Է. Այն անյողնակի ուղղական անուանքը՝
որոնք ի սեռականն՝ յոգնակի եղած են. օր. իմն և Հիւսիսափայլից և
Ը. Այն յոգնակի ուղղականաց՝ եղակի սեռականները, օրինակ իմն,
«գրուածքների» (գրուածոց): Թ. Այն մասամբ հայերէն և մասամբ
այլ օտար լեզուներէ ձեւացուցած բառերն և բացատրութիւնք: Արդ,
այս կիրառութիւնքս ոչ միայն նախնեաց քով չեն գտնուիր, այլ և գլխու-
վին հակառակ են նոցա հայերենին: Սակայն և այնպէս այս և ասոնց
նման դեռ ուրիշ շատ խոտորմունքներ կ'ընթերցուին «Մուրճի» գեռ.
նախընթաց տարւոյ վերջի թուոյն՝ Յաւաջաբանին մէջ: Իսկ չ, վ, ոչ,
և, ց, ել և իլ, եւ, և իւ, ցաշ, և ցեղ տառերն և բայից վերջաւ-
րութիւնները՝ փոփոխակի խաղալիք դարձել են մի քանի գրողաց զբը-
չի ներքև, ինչպէս Այբուբենի տառերը՝ դրաշարի մի ձեռքին մէջ,
որք ինչպէս կ'ուզեն կը շարեն. բայց հայերէն դպրութեան վրայ հրա-
կոյ՛ արագորիչներուն անկ է, անքուն ակամբ հսկել և այսպիսի անսո-
վոր վարմանց դէմ բողոքել. որպէս զի կանոնաւորուելու տեղ՝ հետըզ-
հետէ նորանոր անկանոնութիւնք չաղաւաղեն զայն: Իսկ արեւմտեան
աշխարհաբարի միջէն վերցուելիք արգելքն և խորթութիւնքն՝ են
հետեւեալները. ալ և ըլլայ, աւ, աւ, ադ, աւոր, աւոր, ադոր, աւ-
կէ, աւկէ, աւկից, աւկից, մը, չը, աւակ, մաակ, աւաակ, ա-
ւաակ, կոր և հիւ և ասոնց նման դեռ ուրիշ ռամկական և օտար
բառեր և բացատրութիւններ, որոնք կը ջլատեն հայերէն լեզուի
կորովն և կը նուաստացնեն զայն: Բայց աստ՝ պէտք եմ ըսել. թէպէտ և
արեւմտեան ընտանի խօսակցութեանց մէջ առկալին կը գործածուին
այս և նման խորթութիւնք, սակայն մամուլն՝ արդէն 'ի վաղուց ար-
տաքսած է զանոնք, և իւր գրչաց ձեռքովն՝ իբրև բոցեղէն սրով կը
պահէ նոր գրականութեան մուտքը՝ օտարաբանութեանց դէմ: Իսկ
այլևայլ համախմբութիւնք և ժողովք՝ օր քան զօր աւելի առիթ կու
տան աւելի մաքուր հայերէն խօսելու և գրելու: Այժմ Արեւելեայց
անկ է, ուրեմն, մօտենալ վերջիններուն, առ որ կը մաղթեմ յաջողու-
թիւն: Իսկ թէ Արեւմտեայք և թէ Արեւելեայք առ հասարակ, որպէս
զի այս կրկին աշխարհաբարներս դիւրաւ իրարու մերձեցնեն, որպէս
զի զանոնք կանոնաւոր կերպով զարգացնեն, և այս զուգամանակ
զարգացմանէն՝ բոլորովին մի կատարեալ աշխարհաբար յառաջ բերեն
և կազմակերպեն, ինչպէս Ե. դարուն Հայաստանի այլ և այլ գաւա-
ռաբարբառներն՝ զուգախառնուելով և զուգընթացալով յառաջ բե-
րին Հայոց դպրութեան կամ մեր նախնեաց լեզուն, որուն առանձնա-
յատկութիւններն՝ արդէն 'ի վեր անգը ցուցինք. պէտք է որ միացուցիչ
զօդ մի ունենան: Արդ, իմ կարծիքով, այս լեզուս միայն կարող է լինել
զօդ միութեան վերջոյնեալ երկու աշխարհաբարներուն, որք այլով

ամենայնիւ դեռ անկանոն են, և իրարմէ ունեցած խտորմունքներով և տարբերութեամբ՝ բացարձակապէս չեն կրնար իրարու համաձայնիլ: Այս լեզուս կ'ըսեմ, որուն բառերն և բացատրութիւններն, որուն քերականական կանոններն և ձևերն՝ երկաքանչիւրին ես հասարակ են. ուստի բնականապէս ոչ եթէ վերոյիշեալ երկու աշխարհաբարները միայն՝ այլ եթէ 12 և 22 աշխարհաբարներ ևս ունենալինք այդ մօրէն ծնած, դարձեալ կարող էին միանալ անոր հետ, կենդանացնել զայն և առնուլ 'ի նմանէ կենդանութիւն: Այս լեզուս՝ որով մեր անմահանուն նախնիքը կարող եղան աւանդել մեզ ոչ միայն իրենց դարուն, այլ նոյն իսկ յունական գիտութիւնն և հանճարն: Այս լեզուն, որով արեւելեան աշխարհաբարի չորս ներկայացուցիչներն, այսինքն էսթազմալէպ, Հաւնդէս, Արեւիք, և Մաւնոչ, կարող եղան մինչև ցայսօր բացատրել դարուս գիտութիւններն և արուեստներն, առանց օտարէն բառեր մտնալու. և եթէ սղա կաբացին, միւսներն ուրեմն ինչո՞ւ չպիտի կարենան: Միով բանիմ, այս լեզուս, որ բաղդաւորութեան և անբաղդութեանց ժամանակ, որ հեռաւոր և մերձաւոր դարուց հոսանքին մէջ իսկ՝ եղաւ միշտ նշանակ և պահպանակ Հայութեան: Եւ ստուգիւ, երբ զաւառաբարբառներն և աշխարհաբարներն իրարու յաջորդելով յընթացս երկայն դարուց՝ պէսպէս փոփոխութեանց ենթարկուեցան և ընկղմեցան օտար լեզուաց ուկրիանոսներուն մէջ, նախնեաց գրաբարը մնաց միշտ անկորուստ՝ իւր գոյութեան մէջ, երբ դժբաղդ Հայութիւնը՝ սրոյ և հրոյ ձեռքէն փախչելով ցրուեցաւ 'ի Հնդկաստան, յովկիանիա, 'ի Լեհաստան, 'ի Դրանսիականիա և 'ի Թաթարաստան, հետ զհետէ կորսնցուց իւր աշխարհաբարներն, բայց ոչ նոյնպէս գրաբարն: Արդ, Հայութեան պահապան այս նուիրական թերափս, զոր նոքա մագաղաթեայ քանի մի հազուադիւսութեանք և տուփերու մէջ ծրարած տարին իրենց հետ ընդ ծով և ընդ ցամաք, եղաւ նման այն խորհրդաւոր մատենին, զոր կըլլեց Խարայէլի տեսանողներէն մին և լցուեցաւ ազդեցութեամբ, եւաւ դարձեալ մի քանի տասնեակ մագաղաթներու անձուկ պարունակէն և ծաւալեցաւ Ժողովրդեան մէջ. այնպէս որ, կ'ըսուի, թէ Հնդկաստանի և Ճաւայի Հայերը դեռ այսօր իսկ աւելի գրաբար կը խօսին և կը գրեն: Իսկ Լեմբէրկի ազգայիններն, 'ի վաղուց մոռացած լինելով աշխարհաբարը, զոր զոյգ ընդ առաջնոյն տարան իրենց հետ, տակաւին կը պահեն զգրաբար լեզուն, ժամակարգութեանց և ծիսակառարութեանց առթիւ: Ուստի այս և այսպիսի դեռ ուրիշ տեսութեամբք կը յուսամ, թէ ազգասէր մամլոյն հետ ի միասին, հայերէն լեզուի խնամակալք ևս չպիտի դանդաղին կարեւորութիւն տալու այսպիսի մի կարեւոր խնդրոյ, որուն իրազօրո՞մանը կը ցանկայի ևս և գործով:

Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳՍԵԱՆ